

## ԱՆՆԱ ՀԱԿՈՒՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և  
իրավունքի ինստիտուտի հայցորդ

### ՊՐԵՏՈՐԱԿԱՆ ԷԴԻԿՏՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՊՐԵՏՈՐՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

Սույն գիտական հոդվածում ներկայացված են պրետորական էդիկտները և դրանց հետ կապված կարևոր հիմնահարցերը: Մանրամասն բնութագրված է պրետորական էդիկտների ծագման աղբյուրը, գործողության ժամկետը, դասակարգումը, ինչպես նաև էդիկտների բովանդակությունը կազմող բաղկացուցիչ մասերը:

Ուսումնասիրված են որոշ էդիկտներ՝ որպես հատուկ նշանակություն ունեցող հարցերի լուծման օրինակներ:

Ընդհանուր բնույթով անդրադարձ է կատարված պրետորական իրավունքի զարգացած ինստիտուտների որոշ առանձնահատկություններին և պրետորի որոշ արտոնություններին:

Բնութագրված է հռոմեական իրավագիտությունում հայցի հասկացությունն ու սահմանումը: Միաժամանակ ոչ սպառիչ, սակայն շատ մանրակրկիտ թվարկված են այդ ժամանակաշրջանում ներկայացվող հայցերի տեսակները և դրանց ներկայացման դեպքերը:

*Հիմնաբառեր* - *հռոմեական իրավունք, պրետորի գործունեություն, էդիկտ, պրետորների արտոնություններ, Հուսահինիանոսի Ինստիտուցիաներ:*

Պրետորական իրավունքի գլխավոր ձևը հանդիսացել են պրետորական էդիկտները: Գայուսի Ինստիտուցիաների համաձայն՝ էդիկտներն իրենց էությանը եղել են այն պաշտոնատար անձանց որոշումներն ու հրամանագրերը, ովքեր ունեցել են դրանք արձակելու իրավունք:

Էդիկտներ արձակելու իրավունքը պատկանել է հռոմեական ազգի պաշտոնատար անձանց, սակայն, այս կապակցությամբ ամենակարևոր նշանակությունն ունեցել են քաղաքի և օտարերկրացիների պրետորների էդիկտները<sup>1</sup>: Նմանատիպ բնույթով էդիկտների սահմանումներ են պարունակվել նաև Հին Հռոմի շատ այլ իրավական և ոչ իրավական ակտերում, ինչպես նաև բազմաթիվ իրավաբանական ակադեմիական աղբյուրներում<sup>2</sup>: Որպես օրինակ, կարելի է ներկայացնել իրավաբանական հանրագիտարանում նշված հետևյալ սահմանումը. «Պրետորական էդիկտը՝ դա պրետորի դատական գործունեության ծրագիր է, որը հայտարարվում է պաշտոնի անցնելու ժամանակ, և մնում է ուժի մեջ նրա մագիստրատուրայի ողջ տարվա ընթացքում: Դա պրետորական իրավունքի հիմնական պոզիտիվ ձևն է, որի օգնությամբ բարձր հրապարակային և ռազմական իշխանություն ունեցող հռոմեական մագիստրատները հաստատել են վարքագծի ընդհանուր կանոններ»<sup>3</sup>:

Արդարադատության իրականացման մեջ մասնագիտացված քաղաքի պրետորը սկսած մ.թ.ա. 367 թվականից, և պերեգրինների գործով պրետորը՝ սկսած մ.թ.ա. 242 թվականից՝ արտահայտել են իրավագիտակցության նվաճումներն

իրենց էդիկտներում:

Պրետորական էդիկտները բաժանվել են առաջին պրետորի էդիկտների, որոնց ծագման աղբյուրները հանդիսացել են հռոմեական քաղաքացիների հետ գործերը, և երկրորդ պրետորի էդիկտների, որոնց ծագման աղբյուրներն են եղել պերեգրինների գործերը: Առաջին պրետորի էդիկտների ուժը տարածվել է բացառապես հռոմեական քաղաքացիների վրա, իսկ երկրորդ պրետորի էդիկտների ուժը՝ հիմնականում պերեգրինների վրա:

Կախված գործողության ժամկետից՝ պրետորական էդիկտները բաժանվել են մեկ տարի ժամանակահատվածով գործող էդիկտների, ինչը պայմանավորված է եղել պրետորի իշխանությանը գտնվելու ժամկետի հետ, և միանգամայն էդիկտների՝ հայտարարությունների, որոնք արձակվել են հատուկ դեպքերում: Առաջիններն իրենց մեջ ներառել են պրետորի տարեկան գործունեության ծրագիրը, իսկ երկրորդները որոշել են մասնավոր, պրետորի առօրյա գործունեության հետևանքով առաջացած հարցերը:

Պրետորական էդիկտը, որպես կանոն, կազմված է եղել մի քանի տեքստային բաժիններից՝ տիտուլներից, որոնք ունեցել են տվյալ բաժնի բովանդակությանը համապատասխանող անվանում, և երկու հիմնական մասից: Գլխավոր մասում նախատեսվել է պրետորի գործունեության ծրագիրը՝ պաշտոնը զբաղեցնելու ողջ տարեկան ժամկետի համար, հայտարարվել են կանոններ, որոնցով պրետորը մտադրվել է գործել պաշտոնը զբաղեցնելու ընթացքում, նշվել են քաղաքացիական հայ-

www.journal.lawinstitute.am

ցեր ընդունելու և մերժելու դեպքերը: Բացի այդ, գլխավոր մասում հրատարակվել են հայցի հիմնական կետերը, պրետորի կողմից դատական գործունեությունը ղեկավարելու կոնկրետ նորմերն ու սկզբունքները: Պրետորն իր էղիկտներում չի ձևակերպել ընդհանուր, վերացական կանոններ, այլ հիմնականում առանձնացրել է իրավաբանական տեսակետից կարևոր խնդիրները<sup>4</sup>:

Հաշվի առնելով դատական վեճերի լուծման նշված միջոցը՝ պրետորն էղիկտներից մեկում արձանագրել է երդման արարողության ընթացակարգը, որի համաձայն՝ «եթե գործի վարույթի մասնակիցը տա իրեն առաջարկված երդումը, ապա պրետորը նրան կպաշտպանի: Իսկ եթե նա երդվի ոչ այնպես, ինչպես առաջարկված է երդումը, ապա պրետորը չի պաշտպանի այդ երդումը, քանի որ ինքը (պատասխանողը) երդվել է ինքն իր համար»<sup>5</sup>:

Պրետորն իր էղիկտներում ակնհայտորեն անդրադարձել է իրավաբանական և սոցիալական նշանակություն ունեցող հարցերին: Օրինակ, պայմանագրային պարտավորությունների պաշտպանության վերաբերյալ պրետորը հայտնել է, որ գործունեության մեկ տարվա ընթացքում կվարի հետևյալ քաղաքականությունը՝ «պահպանել այն պայմանագրերը, որոնք չեն հանդիսանում չար մտադրության հետևանք կամ չեն հակասում օրենքներին, պլեբիսցիտներին, սենատուսկոնսուլտներին, դեկրետներին, պրինցեպսների էղիկտներին և որևէ կերպ չեն շրջանցում այս կանոնները՝ չպահպանելով և պաշտպանություն չտրամադրելով վերոնշյալին հակասող պայմանագրերին»<sup>6</sup>: Բացատրվել է նաև, որ չար մտադրությունը կատարվում է խաբեության և խարդախության միջոցով, և ինչպես ասել է Պեդիուսը՝ չար մտադրությամբ է կնքված այն պայմանագիրը, որի դեպքում մյուսին շրջանցելու համար կատարվում է մի բան, սակայն քողարկվում է մեկ ուրիշ բան<sup>7</sup>:

Շատ դեպքերում էղիկտների մեջ անդրադարձ է կատարվել մի շարք մասնավոր հարցերի, ինչպես օրինակ՝ գումարային պարտքի վճարման հարցի լուծումը, այսինքն՝ գումար վճարելու խոստումը չկատարելու հետևանքները, ամուսնու, երեխաների կամ մյուս հարազատների և մտերիմների մահվան դեպքում սուգ կրելու ժամանակահատվածի սահմանումը, և այլն:

Պրետորական էղիկտի գլխավոր մասում շոշափվել են նաև մի շարք ուրիշ հարցերի լուծման ճանապարհներ: Էղիկտի երկրորդ՝ լրացուցիչ մասում հիմնականում ներկայացվել են հայցերի տիպային ձևերը, դատական բանաձևերի ցուցակները, որոնց հետ օրենքին համապատասխան կապ-

ված է եղել այս կամ այն գործը քննող և դրանց համաձայն որոշումներ կայացնող դատավորը<sup>8</sup>:

Անդրադառնալով պրետորական իրավունքի բովանդակությանը, հարկ է կենտրոնանալ դրա առանձնահատուկ զարգացած ինստիտուտներին, ինչպիսին են՝ սեփականության, ժառանգության, պարտադիր իրավունքի ինստիտուտները, որդեգրման և խնամակալության ինստիտուտը, ինչպես նաև նյութական իրավունքի մյուս ինստիտուտները, որոնք ձևավորվել են պրետորական էղիկտներում պարունակվող նորմերի, Հռոմի մասնավոր իրավունքի և համազգային իրավունքի բնագավառում ներկայացված հայցերի արդյունքում: Պրետորական իրավունքի բնութագրման համար բավականին կարևոր նշանակություն ունի պրետորական էղիկտներում պարունակվող դատավարական իրավունքի նորմերի քննությունը: Վերջիններս որոշիչ դեր են ունեցել պահպանողական բնույթ ունեցող Հռոմի մասնավոր իրավունքի և համազգային իրավունքի զարգացման մեջ:

Դատական ոլորտում պրետորն ունեցել է բարձրագույն իշխանություն, հետևաբար ամբողջությամբ վերահսկել է դատավարության բոլոր փուլերը: Պրետորի բավականին մեծ և բազմազան դատավարական արտոնությունները վերաբերել են դատավարական ընթացքի նախապատրաստական և դատաքննության փուլերին, բացառապես բոլոր կողմերին: Նշված իրավասության ուժով պրետորն ունեցել է մեծ ազդեցություն դատական որոշում կայացնելու ընթացքի վրա, ինչպես նաև տիրապետել է մի շարք այլ միջոցներով և հնարավորություններով: Ըստ այդմ՝ վերջինս հանդիսացել է որոշիչ մարմին տվյալ ժամանակաշրջանում գոյություն ունեցող ողջ հռոմեական իրավական համակարգում:

Վերոնշյալ արտոնություններն առաջնահերթ վերաբերել են քաղաքացիական հայցերով լուծումներ տալու հարցին, այսինքն՝ հայցն ընդունելու կամ մերժելու հարցին, իսկ հայցի ընդունման դեպքում՝ հայցի տեսակին:

Հռոմեական հասարակության մեջ ձևավորված կարգի համաձայն՝ պետության կողմից օբյեկտիվ կամ սուբյեկտիվ իրավունքի պաշտպանվածությանը հնարավոր է եղել անդրադառնալ միայն այն դեպքում, երբ լիազորված պետական մարմինը՝ պրետորը, սահմանել է այս կամ այն գործերով հայց ներկայացնելու հնարավորություն: Նշվածի հիմքով Հռոմի մասնավոր իրավունքն ընդունված է անվանել հայցերի համակարգ<sup>9</sup>:

Հռոմեական իրավագիտությունում հայց է համարվել դատական կարգով անձի սեփականություն-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նր բռնագանձելու իրավունքը: Ըստ այդմ՝ հայցերը բաժանվել են երկու տեսակի՝ գույքային և անձնական: Գույքային հայցն ուղղված է եղել որոշ գույքի նկատմամբ իրավունքի ճանաչմանը: Օրինակ, գույքը փաստացի տիրապետող անձից հետ վերադարձնելու պահանջի մասին սեփականատիրոջ հայցային պահանջը: Անձնական հայցն ուղղված է եղել պարտատիրոջ նկատմամբ պարտապանի պարտավորությունների կատարմանը: Սովորական գույքային հայցը ներկայացվել է գործող օրենսդրությանը խիստ համապատասխան՝ պահպանելով Հռոմի մասնավոր իրավունքի պահանջները:

Հուստինիանոսի Ինստիտուցիաների համաձայն՝ այն տրվել է բոլոր այն դեպքերում, երբ ներկայացվել է հողի նկատմամբ իրավունք, շինության մեջ ուզուֆրուկտի նկատմամբ իրավունք, հարևանությամբ գտնվող հողի միջով անցնելու և անասուններին քշելու իրավունք, հարևանությամբ գտնվող կալվածքի ջրմուղի իրավունք: Գույքային է համարվել նաև քաղաքի սերվիտուտների վերաբերյալ հայցը, օրինակ՝ վերնաշենքի կառուցապատման իրավունքի, արժեքավոր տեսարանի, օտար անձի տարածություն դուրս եկող պատշգամբի կառուցման իրավունքի, հարևանությամբ գտնվող շենքի պատի մեջ գերան ամրացնելու իրավունքի մասին հայցն և այլն<sup>10</sup>:

Ի տարբերություն սովորական գույքային հայցի, որը մեկնաբանվել է բավականին լայն իմաստով և մանրամասն սահմանվել Հռոմի մասնավոր իրավունքում, պրետորական գույքային իրավունքն առավել հաճախ նախատեսված չի եղել գործող օրենսդրությամբ և սահմանվել է առանձին դեպքերում:

Հարցերի լուծման ժամանակ պրետորն ունեցել է հայեցողական մեծ ազատություն և Հռոմի մասնավոր իրավունքի հաստատված կանոններին հակասող իր իրավադրույթներում հնարավորություն է ունեցել հղում կատարել արդարությանը, բնական բանականությանը, ինչը հանդիսացել է ընդունված պրակտիկա պրետորական իրավունքի դեպքում<sup>11</sup>: Ավելին, պրետորը հայցն ընդունելով հնարավորություն է ունեցել որևէ կերպ չբացատրել իր գործողությունները և ընդհանրապես չկատարել որևէ հղում:

Հին Հռոմի իրավաբան Պողոսի խոսքերից ելնելով՝ պրետորական էդիկտներում արտահայտվող դրույթները ցանկացած դեպքում ունեցել են իրավական բնույթ: Պրետորական իրավունքը համարվել է կարևորագույն իրավունք, քանի որ պրետորն իր իշխանության ուժով միշտ սահմանել է որևէ

իրավունք, նույնիսկ, երբ կայացրել է անարդարացի որոշում: Ուշադրությունը շեշտադրվել է ոչ թե պրետորի կատարած գործողությանը, այլ, թե ինչ է հարկավոր կատարել<sup>12</sup>: Հռոմի մասնավոր իրավունքի զարգացման ժամանակ պրետորը հայցն ընդունել է որպես օրինակ ներկայացված հետևյալ դեպքում՝ օրինական հիմքով (առուծախ, նվիրատվություն, հասանելիք բաժնեմասի ընդունում) որոշակի գույք ձեռք բերած անձը, ով դեռևս չի դարձել այդ գույքի սեփականատերը, սակայն փաստացի կորցրել է դրա նկատմամբ իր տիրապետումը, Հռոմի մասնավոր իրավունքի նորմերի համաձայն կորցրած գույքը գտնելու նպատակով չի ունեցել որևէ հայցի իրավունք: Հուստինիանոսի Ինստիտուցիաներում այս կապակցությամբ նշվել է, որ նման պայմաններում հայցի բացակայությունն անարդարացի է, ուստի պրետորի կողմից տրվել է հայց, որում տիրապետումը կորցրած անձը գույքը ձեռք է բերել վաղեմության միջոցով, և այսպիսով հայցվորը վինդիկացիա է արել իր գույքը: Գույքային հայցերի հետ մեկտեղ, պրետորն իր իրավասությամբ հաստատել է նաև անձնական հայցեր<sup>13</sup>: Գրանց տեսակներից են եղել պարտքն ընդունելու հայցը, խախտված իրավունքները վերականգնելու հայցը, տուգանքի հայցը և այլն: Անձնական և գույքային հայցերի ձևաթղթերը հրապարակվել են պրետորական էդիկտներում և կիրառելի են եղել առկա իրավահարաբերությունների նկատմամբ, վերջիններիս համար մշակվել են անհատական անվանումներով համապատասխան հայցեր: Վերոնշյալ տիպային ձևաթղթերի միջոցով պրետորները տարբեր հայցերին հաղորդել են իսկապես անհատականացված բնույթ<sup>14</sup>:

Պրետորի դատավարական արտոնությունները, բացի քաղաքացիների հայցերից, տարածվել են նաև պայմանագրային հարաբերությունների վրա: Պայմանագրային հարաբերությունների, ինչպես նաև վերը նշված հայցերի դեպքերում, պրետորը հիմնականում լուծել է այն հարցերը, որոնք հնարավոր չի եղել լուծել միայն Հռոմի մասնավոր իրավունքի հաստատված կանոնների վրա հիմնվելով: Այստեղ ներառվել են նաև պայմանագրերն օրինական ճանաչելու հարցերը:

Նշված հարցերի լուծման ժամանակ պրետորը ղեկավարվել է հետևյալ սկզբունքներով և դրույթներով՝

- 1) առուվաճառքի պայմանագրի մեջ հիմնական ուշադրությունը հարկ է դարձնել բուն իմաստին, այլ ոչ ասվածին,
- 2) արդարությունը պահանջում է, որպեսզի մտքերն և կամքը պահպանվեն,

3) որոշ դեպքերում գրված տեքստն ունի ավելի կարևոր նշանակություն, քան կողմերի միջև առկա մտադրությունը, և այլն<sup>15</sup>: Առաջնորդվելով նշվածով պրետորն ավանդական հռոմեական իրավունքի սահմաններում արդարացի հիմնավորմամբ ամփոփել է ցանկացած պայմանագրային դեպք և ինքնուրույն լուծել այնպիսի անլուծելի հարցեր, ինչպիսին են ազատ հռոմեացու և իրավունքի սուբյեկտ չհանդիսացող ստրուկի միջև կնքված գործարքի օրինականության ճանաչումը, ազատ հռոմեացու և անչափահասի միջև կնքված գործարքի իրավաչափությունը, և այլն:

Հուստինիանոսի Ինստիտուցիաներում այս կապակցությամբ նշվել է՝ «եթե ստրուկի կողմից գործարքը կնքվել է տիրոջ հրամանով, ապա պրետորը խոստանում է ամբողջ հայցն ընդունել միայն տիրոջ դեմ, քանի որ կոնտրագենտն ապավինել է տիրոջ ազնվությանը»<sup>16</sup>: Այդտեղ վկայակոչվել է նաև, որ գոյություն են ունեցել երկու այլ ամբողջական հայցեր, որոնց առկայության պարագայում պրետորը հիմք է ընդունել տիրոջ ազնվությունն ու ընդունել դրանք: Դրանցից մեկն անվանվել է «էկ-

զերցիտորային հայց», որի դեպքում նավի նավապետի կողմից նշանակված ստրուկի հետ կնքվել է վերջինիս կողմից աշխատանք կատարելու պայմանագիր: Տվյալ հայցն իր անվանումը ստացել է «էկզերցիտոր» բառից, այսինքն՝ մի անձ, ում նավի շահագործումից մատակարարվել է ամենօրյա եկամուտ: Երկրորդ հայցը կոչվել է «փնստիտորային», այսինքն՝ մի անձ, ով նշանակվել է գործակատարի կողմից: Պրետորի կողմից սույն հայցը ընդունվել է այն ժամանակ, երբ վաճառատան գործակատարի կողմից նշանակված ստրուկի հետ կնքվել է պայմանագիր այն գործի վերաբերյալ, որի համար նա նշանակվել է: Նկարագրված հայցերը նախատեսված չեն եղել ավանդական հռոմեական իրավունքում: Այնուամենայնիվ, վերոնշյալը չի հանդիսանում այդ հայցերի սպառիչ թվարկումը, պրետորն ընդունել է նաև մնացածիս այլ հայցեր՝:

<sup>1</sup> Տե՛ս, Памятники Римского права, Законы XII таблиц, Институции Гая, Дигесты Юстиниана, М., 1997, էջ 17:  
<sup>2</sup> Տե՛ս, Wilinski A., Das Römisches Recht, Leipzig, 1996: Hausmaninger H., Selb W., Römisches Privatrecht, Koln, 1983: Hartel J., Polay E., Römisches Recht und Römische Rechtsgeschichte, Berlin, 1987: Crawford M., Roman Status, London, 1996:  
<sup>3</sup> Տե՛ս, Юридическая энциклопедия, Под. ред. Б. А. Топорнина, М., 2001 , էջ 866:  
<sup>4</sup> Տե՛ս, Савельев В. А., Римское и частное право (проблемы теории и истории), Юрист , М., 1995, էջ 48:  
<sup>5</sup> Տե՛ս, Памятники римского права, Законы XII таблиц, նշվ. աշխ., էջ 352:  
<sup>6</sup> Տե՛ս, նույն տեղը, էջ 198:  
<sup>7</sup> Նույն տեղը:  
<sup>8</sup> Տե՛ս, Новицкий И. Б., Перетерский И. С., Римское частное право, М., 1999, էջ 27:  
<sup>9</sup> Տե՛ս, Новицкий И. Б., Перетерский И. С., նշվ. աշխ., էջ 52:  
<sup>10</sup> Տե՛ս, Памятники римского права, Институции Юстиниана, Кофанов Л. Л., Томсинов В. А. , М., 1998, էջ 319, 321:  
<sup>11</sup> Տե՛ս, История государства и права зарубежных стран, Ч. 1, Жидков О. А. и Крашенинникова Н. А. , էջ 156:  
<sup>12</sup> Տե՛ս, Памятники римского права, Законы XII таблиц, նշվ. աշխ., էջ 159:  
<sup>13</sup> Տե՛ս, Кофанов Л. Л., Томсинов В. А., նշվ. աշխ., էջ 321-323:  
<sup>14</sup> Տե՛ս, Новицкий И. Б., Перетерский И. С., նշվ. աշխ., էջ 53-54:  
<sup>15</sup> Տե՛ս, նույն տեղը, էջ 298-299:  
<sup>16</sup> Տե՛ս, Кофанов Л. Л., Томсинов В. А., նշվ. աշխ., էջ 337:  
<sup>17</sup> Տե՛ս, նույն տեղը, էջ 339-343:

Աննա Ակոբյան

Соискатель института философии, социологии и права НАН РА

## РЕЗЮМЕ

*Преторские эдикты как результат правотворческой деятельности преторов*

В данной научной статье представлены преторские эдикты и связанные с ними важные основные задачи. Подробно охарактеризованы источник возникновения преторских эдиктов, срок действия, классификация, а также составные части содержания эдиктов.

Изучены некоторые из эдиктов, как примеры решения вопросов, имеющих особое значение.

В целом, затронуты некоторые особенности развитых институтов преторского права и некоторые привилегии претора.

Охарактеризованы понятие и определение иска в римской юриспруденции. В то же время, не исчерпывающе, но очень детально перечислены виды предъявляемых исков данного временного периода, и случаи их предъявления.

**Ключевые слова:** Римское право, деятельность претора, эдикт, привилегии преторов, Институции Юстиниана.

Anna Hakobyan

Applicant Institute of Philosophy, Sociology and Law NAS RA

## SUMMARY

*Praetorian edicts as a result of the praetors' law-making activity*

The following scientific article presents praetorian edicts and important issues related to them. The source of origin, the validity period, the classification of praetorian edicts, as well as the component parts which form the content of edicts, are characterized in detail.

Some edicts have been examined as examples of solving issues of specific significance.

In general, attention is drawn to some peculiarities of developed institutes of praetorian law and some privileges of the praetor.

The notion and definition of the claim in Roman jurisprudence is described.

At the same time, there are listed non-exhaustive, but very thoroughly the types of claims presented during that period and their presentation cases.

**Key words:** Roman law, praetor's activity, edict, praetors' privileges, Institutes of Justinian.